

ՍԻԱՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 1

Խնդիր համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմուրդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևաբուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևաբուղը: Պատասխանների ճևաբուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

1 Սնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ավտոտրոֆ օրգանիզմներ են
- 2) ունեն քլորոֆիլ
- 3) ունեն սահմանափակ աճ
- 4) արտազատում են միզանյութ

2 Ի՞նչն է բնորոշ միաշաքիլավորների դասի բույսերի մեծ մասին.

- 1) սերմում էնդոսպերմի առկայությունը
- 2) սննդանյութերի կուտակումը սաղմում
- 3) ցողունում կամքիումի առկայությունը
- 4) տերևների ցանցաջիղ ջղավորությունը

3 Ո՞ր կենդանիներն ունեն փակ արյունատար համակարգ.

- 1) օղակավոր որդերը
- 2) միջատները
- 3) աղեխորշավորները
- 4) տափակ որդերը

4 Ի՞նչ հաջորդական փուլերով է ընթանում միջատների լրիվ կերպարանափոխությունը.

- 1) ձու, թրթուր, հարսնյակ, հասուն ձև
- 2) ձու, հարսնյակ, թրթուր, հասուն ձև
- 3) հասուն ձև, ձու, հարսնյակ, թրթուր, հասուն ձև
- 4) հասուն ձև, թրթուր, ձու, հարսնյակ, հասուն ձև

5 Ի՞նչն է բնորոշ և սողունների, և քոչունների մեծամասնությանը.

- 1) տաքարյունությունը
- 2) քառախորշ սիրտը
- 3) կրկնակի շնչառությունը
- 4) ձվադրումը

6 Նշվածներից ո՞ր կենդանիներն են սառնարյուն.

- 1) ձկները, սողունները, երկվենցաղները
- 2) քոչունները և սողունները
- 3) ձկները և կաթնասունները
- 4) քոչունները և երկվենցաղները

7

Մարդու կենտրոնական նյարդային համակարգի ո՞ր բաժինն է վերահսկում ջերմակարգավորումը, ծարավի և քաղցի զգացողությունը.

- 1) կամուրջը
- 2) երկարավուն ուղեղը
- 3) ենթատեսաթումբը
- 4) տեսաթումբը

8

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում պարասիմպաթիկ նյարդային համակարգի դրդման դեպքում.

- 1) բրի լայնացում
- 2) արյան ճնշման բարձրացում
- 3) անոթազարկի հաճախացում
- 4) լեղու արտադրության ակտիվացում

9

Ո՞րն է կազմում մարդու միջին ականջի մաս.

- 1) ձվաձև (օվալաձև) պարկիկը
- 2) սալը
- 3) լսողական արտաքին անցուղին
- 4) խխունջը

10

Ինունիտետի տեսակներին վերաբերող ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) կյանքի ընթացքում օրգանիզմում ձևավորված բնական ձեռքբերովի իմունիտետը փոխանցվում է սերնդեսերունդ
- 2) բուժիչ շիճուկի կազմում ստացված հակամարմինները պայմանավորում են արիեստական ակտիվ իմունիտետը
- 3) պատվաստումից հետո օրգանիզմում առաջացած հակամարմինները պայմանավորում են արիեստական պասիվ իմունիտետը
- 4) ժառանգաբար փոխանցվում է բնական բնածին իմունիտետը

11

Ի՞նչ նյութերի մասնակցությամբ է ֆիբրինոգենը վերածվում ֆիբրինի մարդու օրգանիզմում.

- 1) պտիալին ֆերմենտի և կալցիումի աղերի
- 2) կալցիումի աղերի և թրոմբին ֆերմենտի
- 3) կալիումի աղերի
- 4) թրոմբին և պեպսին ֆերմենտների

12

Որտեղի՞ց է դուրս գալիս մարդու թոքային ցողունը.

- 1) աջ փորոքից
- 2) ձախ նախասրտից
- 3) աջ նախասրտից
- 4) ձախ փորոքից

13

Ո՞ր է անցնում օդը անմիջապես քթի խռոչից մարդու ներշնչման ժամանակ.

- 1) քըլմպան
- 2) կոկորդ
- 3) շնչափող
- 4) բրոնխներ

14

Մարդու մարսողական համակարգի ո՞ր բաժնում են բացվում լեղածորանն ու ներաստամոքսային գեղձի արտատար ծորանը.

- 1) կույր աղիում
- 2) տասներկումատնյա աղիում
- 3) ստամոքսում
- 4) հաստ աղիում

15

Մարդու օրգանիզմում վիտամինների գործառույթի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) մասնակցում են արյան մակարդմանը
- 2) նպաստում են օրգանիզմի աճին
- 3) հանդիսանում են էներգիայի աղբյուր
- 4) նպաստում են էրիթրոցիտների առաջացմանը

16

Ո՞ր միացությունն է պաշտպանում գերկարճալիք ուլտրամանուշակագույն ճառագայթներից.

- 1) աղբենալինը
- 2) հակամարմինը
- 3) մելանինը
- 4) սուլբուլինը

17

Մարդու ո՞ր մկաններն են առավել դանդաղ կծկվում.

- 1) վերին վերջույթների
- 2) ստորին վերջույթների
- 3) աղիների
- 4) լեզվի

18

Կորիզակում տեղի է ունենում՝

- 1) ոիբոսումների մեծ և փոքր մասերի ձևավորումը
- 2) լիպիդների կենսասինթեզը
- 3) ԱԵՖ-ի սինթեզը
- 4) ԴՆԹ-ի կրկնապատկումը

19

Նշված օրգանիզմներից ո՞րն է պատկանում պրոկարիոտներին.

- 1) նոստոկը
- 2) ծխախոտի մողախկայի վիրուսը
- 3) սովորական ամերիան
- 4) հողաքափիկ ինֆուզորիան

20

Պլաստիկ փոխանակության օրինակներ են.

- 1) սպիտակուցի կենսասինթեզը և սպիրտային խմորումը
- 2) գլիկոլիզը և նիտրիֆիկացումը
- 3) շնչառությունը և սպիտակուցի կենսասինթեզը
- 4) քեմոսինթեզը և ֆոտոսինթեզը

21

Նշված նյութերից որո՞նք են մտնում աղիքային ցուպիկի T4 բակտերիաֆազի բաղադրության մեջ.

- 1) Ω-ՆԹ, Τ-ՆԹ, սպիտակուց և լիալիդներ
- 2) Ω-ՆԹ, սպիտակուց և լիալիդներ
- 3) Ω-ՆԹ, Τ-ՆԹ և սպիտակուց
- 4) Τ-ՆԹ և սպիտակուց

22

Տրանսլյացիայի գործընթացում անմիջական մասնակցություն ունեն.

- 1) Τ-ՆԹ-ի մոլեկուլի երկու թելիկներից մեկը և ոիրոսումները
- 2) ի-Ω-ՆԹ-ն, փ-Ω-ՆԹ-ն և ոիրոսումները
- 3) Τ-ՆԹ-ի մոլեկուլի երկու թելիկները
- 4) Τ-ՆԹ-ի մոլեկուլի երկու թելիկներից մեկը և ի-Ω-ՆԹ-ն

23

Միտոքոնդրիումների կատարեների բաղանքներում ԱԵՖ-սինթազի մոլեկուլը այնպես է տեղադրված, որ կարող է անցկացնել.

- 1) Էլեկտրոններ՝ բաղանքի ներքինից դեպի արտաքին մակերևույթ
- 2) ալրոտոններ՝ բաղանքի արտաքինից դեպի ներքին մակերևույթ
- 3) Էլեկտրոններ՝ բաղանքի արտաքինից դեպի ներքին մակերևույթ
- 4) ալրոտոններ՝ բաղանքի ներքինից դեպի արտաքին մակերևույթ

24

Ինչպես են դասավորված լիալիդների մոլեկուլները պլազմային բաղանքում.

- 1) կազմում են երկշերտ, որում «պոչիկներն» ուղղված են դեպի արտաքին կողմեր, իսկ «գլխիկները»՝ դեպի ներս
- 2) կազմում են երկշերտ, որում «պոչիկներն» ուղղված են դեպի ներս, իսկ «գլխիկները»՝ դեպի արտաքին կողմեր
- 3) դասավորված են մեկ շարքով
- 4) սպիտակուցների մոլեկուլների հետ կազմում են իրար հաջորդող շերտեր

25

Բջջի ո՞ր օրգանիզմներն ունեն ինքնավերաբարտադրման ընդունակություն.

- 1) լիզոսումները և էնդոպլազմային ցանցը
- 2) կորիզը և Գոլցիի ապարատը
- 3) ռիբոսումները և միտոքոնդրիումները
- 4) միտոքոնդրիումները և պլաստիդները

26

Ի՞նչ պրոցեսներ են բնորոշ միտոզի թերթագիճն.

- 1) քրոմոսումների դասավորում իլիկի հասարակածային հարթությունում
- 2) դուստր քրոմոսումների հեռացում միմյանցից և տարամիտում դեպի բջջի բնեղներ
- 3) քրոմոսումների ապապարուրում և միահյուսում իրար, կորիզաթաղանթի ձևավորում
- 4) քրոմոսումների պարուրում և միահյուսում իրար, կորիզաթաղանթի տարրալուծում

27

Ինչե՞րն են (ի՞նչն է) առաջանում էնտոդերմից օնտոգենեզի ընթացքում.

- 1) ուկրային հյուսվածքները
- 2) մաշկի էպիթելի
- 3) աղիքի էպիթելի
- 4) սեռական գեղձերը

28

Ինչպե՞ս է կոչվում օրգանիզմների հատկանիշները և զարգացման առանձնահատկությունները հաջորդ սերունդներին փոխանցելու հատկությունը.

- 1) գենոտիպ
- 2) ֆենոտիպ
- 3) ժառանգականություն
- 4) փոփոխականություն

29

Ինչպիսի՞ ծնողական գենոտիպերի դեպքում է երկիրքիդ խաչասերումից հետո, երկու ալելով էլ ոչ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում, ստացվում չորս ֆենոտիպային խումբ.

- 1) AABb և aabb
- 2) AABB և aabb
- 3) AABB և AaBb
- 4) AABB և AAbb

30

Ինչո՞վ է պայմանավորված բույսերի ցիտոպլազմային արական ամլությունը.

- 1) փոշեհատիկի երկու սպերմիումներից մեկի ոչնչացմանը
- 2) սաղմնապարկում ձվաբջջի բացակայությամբ
- 3) սաղմնապարկում կենտրոնական բջջի բացակայությամբ
- 4) փոշեհատիկի միտոքոնդրիումների ԴՆԹ-ի մուտացիաներով

31

Ի՞նչ է բնորոշ մոդիֆիկացիոն փոփոխականությանը.

- 1) առաջացած փոփոխությունները չեն ժառանգվում սերնդեսերունդ
- 2) առաջացած փոփոխությունները մուտացիաների արդյունք են
- 3) փոփոխություններն առաջանում են հանկարծակի, թոփքաձև, ոչ ուղղորդված
- 4) առաջացած փոփոխությունները փոխանցվում են սերնդեսերունդ

32

Ո՞ր հատկանիշի դրսելորումն է մեծապես կախված արտաքին միջավայրի պայմաններից.

- 1) աչքերի ծիածանաբաղանքի գույնը
- 2) արյան խումբը
- 3) վերջույթների քանակը
- 4) օրգանիզմի քաշը

33

Ի՞նչ է կոչվում մեկ զույգ հոմոլոգ քրոմոսոմների ավելացումը.

- 1) հապլոիդիա
- 2) տրիսոմիա
- 3) անեուպլոիդիա
- 4) պոլիպլոիդիա

34

Ըստ էվոլյուցիայի սինթետիկ տեսության՝ ի՞նչն է համարվում էվոլյուցիայի տարրական միավոր.

- 1) տեսակը
- 2) ցեղը
- 3) օրգանիզմը
- 4) պոպուլյացիան

35

Ո՞ր պրոցեսի արդյունք է մակարույժ ժապավենաձև որդերի օրգանիզմում մարտղական համակարգի բացակայությունը.

- 1) իդիոադապտացիայի
- 2) արոմորֆոզի
- 3) ռեգեներացիայի
- 4) ընդիհանուր դեգեներացիայի

(36-37) Տղամարդու և կնոջ սեռական գեղձերում 100-ական սկզբնական սեռական քջիջներ (սպերմատոզոնիումներ և օվոզոնիումներ) արդեն տեղափոխվել են աճման գոտի:

36

Որքա՞ն սպերմատոզոնիոներ կարող են գարգանալ.

- 1) 400
- 2) 800
- 3) 100
- 4) 200

37

Որքա՞ն ձվաբջիջներ կարող են գարգանալ.

- 1) 25
- 2) 50
- 3) 100
- 4) 200

(38-39) Երկնագույն աչքերով և առանց պեպենների տղամարդն ամուսնացավ շագանակագույն աչքերով և պեպենոտ կնոջ հետ: Շագանակագույն աչքերը և պեպեններ ունենալը դոմինանտում են համապատասխանաբար երկնագույն աչքերի և պեպեններ չունենալու նկատմամբ և հանդես են գալիս որպես առոտուումային շղթայակցված հատկանիշներ: Ընտանիքում ծնվեց երկնագույն աչքերով և առանց պեպենների երեխա:

38

Գտնել երկնագույն աչքերով և պեպենոտ երեխա ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում.

- 1) 0 կամ $1\backslash 2$ կամ $1\backslash 4$
- 2) 0
- 3) $1\backslash 2$
- 4) $1\backslash 4$

39

Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունի կինը.

- 1) AaBb
- 2) AABB, AaBB, AABb կամ Aabb գենոտիպերից որևէ մեկը
- 3) AABB
- 4) AaBB կամ AABb

40

Սպիտակուցի սինթեզը պայմանավորող ի-Ո-ՆԹ-ի մոլեկուլային զանգվածը 270000 գ.ա.մ. (զանգվածի ատոմական միավոր) է: Նուկլեոտիդների միջին մոլեկուլային զանգվածը 300 գ.ա.մ. է: Որոշել գենի երկարությունը (նանոմետր), եթե հայտնի է, որ մեկ նուկլեոտիդի երկարությունը 0,34 նանոմետր է:

- 1) 1530
- 2) 306
- 3) 765
- 4) 712

41

Գտնելողաշարավոր կենդանիների նշված դասերի (նշված են աջ սյունակում) և նրանց կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունների (նշված են ձախ սյունակում) համապատասխանությունը: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություններ

Դաս

- | | |
|---|-----------------|
| A. կմախրում ունեն պարանոցային, իրանային, սրբանային և պոչային բաժիններ | 1. ձկներ |
| B. կմախրում ունեն պարանոցային մեկ ող | 2. երկկենցաղներ |
| C. սիրտը երկխորշ է | |
| D. միզածորաններով մեզն անցնում է կոյանոց | |
| E. ունեն միայն ներքին ականջ | |
| F. ունեն արյան շրջանառության երկու շրջան | |
| G. սրտով հոսում է միայն երակային արյուն | |
| H. մաշկը մերկ է և խոնավ | |

42

Մարսողական ո՞ր գործընթացը (նշված է ձախ սյունակում) մարդու մարսողական ո՞ր հյութն է (նշված է աջ սյունակում) իրականացնում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Մարսողական գործընթաց

Մարսողական հյութ

- | | |
|--|--------------------------------|
| A. աղիների շարժումների խթանում | 1. լեղի |
| B. նեխման գործընթացների արգելակում | 2. ստամոքսահյութ |
| C. ճարպերի էմուլսացում (էմուլգացում) | 3. ենթաստամոքսային գեղձի հյութ |
| D. ածխաջրերի և ճարպերի մարսում | |
| E. սպիտակուցների առաջնային ճեղքում համեմատաբար պարզ մոլեկուլների | |
| F. մարսողական ֆերմենտների ակտիվացում, սպիտակուցների ուղղում | |
| G. սպիտակուցների ճեղքում մինչև ամինաթթուներ | |

43

Ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) մարդու ո՞ր գեղձին (նշված է աջ սյունակում) է անմիջականորեն համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բնութագիր

Գեղձ

- | | |
|--|--------------|
| A. օրգանիզմի ներքին միջավայրում K^+ -ի և Na^+ -ի կայուն մակարդակի պահպանում | 1. մակերիկամ |
| B. թերգործառույթի դեպքում խախտվում է մարմնի համաչափությունը, մտավոր զարգացումը, դանդաղում է սեռական զարգացումը | 2. վահանաձև |
| C. յոդի պակասի դեպքում առաջանում է տեղային խավագանությունը | |
| D. թերգործառույթի դեպքում դիտվում է քաշի անկում և մկանային թուլություն | |
| E. ապահովում է մտավոր ունակությունների բնականուն զարգացումը | |
| F. միքսենդեմայի զարգացում | |
| G. թերգործառույթի դեպքում առաջանում է բրոնզախտ հիվանդությունը | |
| H. թերգործառույթի դեպքում վատանում է հիշողությունը | |

44

Ո՞ր ֆունկցիան (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանոիդին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Ֆունկցիա

Օրգանոիդ

- | | |
|---|----------------------------|
| A. ոլիոսումների մեծ և փոքր մասերի ձևավորում | 1. բջջային կենտրոն |
| B. բջջի բաժանման ժամանակ բաղանքի քայլայում | 2. հարթ էնդոպլազմային ցանց |
| C. բարդ սպիտակուցների առաջացում | 3. բջջակորիզ |
| D. մոնոսախարիդների սինթեզ | 4. Գոլջիի ապարատ |
| E. պերօրսիստումների ձևավորում | |
| F. սարկոպլազմային ցանցի կազմավորում | |
| G. մասնակցություն բաժանման իլիկի առաջացմանը | |

45

Ո՞ր օրգանական միացությունը (նշված է ձախ սյունակում) ածխաջրի ո՞ր խմբին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգանական միացություն

Ածխաջրի խումբ

- | | |
|------------------|------------------|
| A. խիտին | 1. միաշաքարներ |
| B. հեպարին | 2. բազմաշաքարներ |
| C. բաղանթանյութ | |
| D. դեզօքսիոհիբոն | |
| E. զալակտոն | |
| F. գլիկոգեն | |
| G. գլյուկոն | |
| H. մասնան | |

46

Ինչպիսի՞ն է նշված գործընթացների հաջորդականությունը մարդու ներշնչման և արտաշնչման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. թթվածնով հարուստ արյան փոխադրում արյան շրջանառության մեծ շրջանով
2. թթվածնով աղքատ արյան փոխադրում թոքային զարկերակներով
3. արտաշնչում
4. գազափոխանակություն
5. օքսիհեմոգլոբինի առաջացում
6. կարբոհեմոգլոբինի առաջացում
7. ներշնչում

47

Ի՞նչ հաջորդականությամբ է արյունը շարժվում մարդու արյան շրջանառության մեծ շրջանի անոթներում՝ ձախ փորոքի կծկումից հետո: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. սիներակներ
2. մանր զարկերակներ
3. առոտա
4. խոշոր երակներ
5. մազանոթներ
6. խոշոր զարկերակներ
7. մանր երակներ

48

Ի՞նչ հաջորդականությամբ է հաղորդվում նյարդային ազդակը ռեֆլեքսային աղեղով: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. շարժողական նեյրոն
2. գործառող օրգան
3. ողնուղեղային հանգույց
4. ընկալիչ
5. ներդիր նեյրոն
6. զգայական նեյրոնի դենդրիտ

49

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները ֆազոցիսոնգի ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. կլանված նյութով բշտիկի առաջացում
2. կլանման ենթակա նյութի հպում պլազմային քաղանթին
3. լիզոսոմի միաձուլում՝ առաջացած բշտիկի հետ, և մարսողական վակուոլի ձևավորում
4. ներփրփած հատվածում պլազմային քաղանթի եզրերի մոտեցում
5. պլազմային քաղանթի ներփրում
6. բշտիկի անջատում պլազմային քաղանթից

50

Ինչպիսի՞ն է ֆոտոսինթեզի փուլերի հաջորդականությունը: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. գլյուկոզի առաջացում
2. քլորոֆիլի մոլեկուլի գրգռում
3. ատոմային ջրածնի առաջացում
4. մոլեկուլային թթվածնի առաջացում
5. H-ի իոնների միացում էլեկտրոնի հետ
6. ջրի ֆոտոիդ (քայլայում)

51

Ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը՝ ռեցեսիվ մուտացիաների առաջացումից մինչև նրանց՝ ֆենոտիպում արտահայտվելը: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մուտացիայի արտահայտում ֆենոտիպում
2. ռեցեսիվ մուտացիայի տարածում
3. ռեցեսիվ մուտացիա կրող գամետների միաձուլում
4. նուկլեոտիդների երկու զույգի փոխարինում
5. ռեցեսիվ մուտացիայի առաջացում
6. ըստ մուտանտ գենի՝ հոմոզիգոտ ձևի առաջացում
7. ռեցեսիվ մուտացիա կրող օրգանիզմում գամետների առաջացում

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները, որոնք համապատասխանում են թարթիչավոր որդերի կառուցվածքային առանձնահատկություններին.

1. թթվածինը պլանարիայի օրգանիզմ է անցնում մարմնի ողջ մակերեսով
2. սննդի շմարսված մնացորդները դուրս են զալիս պլանարիայի բերանային անցրով
3. պլանարիայի մարմնի առջևում գտնվում են երկու սերմնարաններ, իսկ ձվարանները բազմաթիվ են
4. պլանարիան բազմանում է միայն անսեռ եղանակով
5. սպիտակ պլանարիայի արտաքրորդական համակարգը կազմված է երկու խողովակներից, որոնք մարմնի հետևի ծայրում բացվում են դուրս
6. սպիտակ պլանարիայի նյարդային համակարգը ցրված տիպի է

53

Ո՞ր պնդումն է ճիշտ մարդու էրիթրոցիտների համար: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. բաղանքների վրա որոշ սպիտակուցների առկայությունը կամ բացակայությունը պայմանավորում է արյան խումքը
2. ամենաերկարակյաց արյան ձևավոր տարրերն են
3. արյան մեջ թրոմբոցիտների քանակը ավելի փոքր է, քան էրիթրոցիտներինը
4. առաջանում են կարմիր ուլուրածում, փայծաղում, լյարդում
5. կազմի մեջ մտնում է երկար պարունակող սպիտակուց
6. էրիթրոցիտների թվի կամ հեմոգլոբինի պարունակության պակասի դեպքում զարգանում է սակավարյունություն
7. արյան մեջ կորուստի դեպքում, էրիթրոցիտների արագ բաժանման շնորհիվ քանակը վերականգնվում է

54

Ո՞ր պնդումն է բնութագրում մարդու կմախսը: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. գանգի զույգ ուկրերից են այտոսկրը, քրոսկրը, քունքոսկրը
2. ողնաշարի յուրաքանչյուր ող ունի մարմին, վերին և ստորին աղեղներ, որոնցից դուրս են գալիս ելուստներ
3. կմախսի ուկորները մասնակցում են արյունաստեղծմանը
4. գանգի ուղեղային բաժնի կենտ ուկրերն են ճակատոսկրը, զագաթոսկրը և ծոծրակոսկրը
5. մարդու ողնաշարում տարբերում են 5 բաժիններ՝ պարանոցային, կրծքային, գոտկային, կոնքային, պոչուկային
6. տարիքի մեծացմանը զուգընթաց ուկրերում աճում է հանքային աղերի պարունակությունը
7. շրջոսկրի (վերնոսկրի) ներքին շերտի բջիջների բաժանման արդյունքում ուկրն աճում է հաստությամբ, իսկ արտաքին շերտի բջիջների բաժանման արդյունքում՝ երկարությամբ

55

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. կուսածնությունն անսեռ բազմացման եղանակ է
2. բակտերիաների մոտ մեյոզը բացակայում է
3. ինֆուզորիաները բազմանում են զոռապորներով և կոնյուգացիայի եղանակով
4. բույսերը բազմանում են ինչպես անսեռ, այնպես էլ սեռական եղանակով
5. երկու կամ ավելի մասերի կիսվելով բազմանում են միայն ամեռաները
6. ջրում ապրող ջրիմուները և որոշ սնկեր բազմանում են զոռապորներով
7. անսեռ բազմացումը լայնորեն տարածված է բակտերիաներում և բույսերում

56

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. արական հետերոգամետություն ունեն բիթեռները, թռչունները, սողունները
2. առաջին սերնդի միակերպության օրենքը Սենդելի առաջին օրենքն է
3. կրոսինգովերի հետևանքով տեղի է ունենում քրոմոսոմների թվի կրկնակի պակասում
4. գեների շղթայակցման խումբը համընկնում է գամետներում քրոմոսոմների թվին
5. Սենդելի երկրորդ օրենքը կոչվում է նաև դոմինանտման օրենք
6. երկինքով առանձնյակի և հոմոզիգոտ դոմինանտ առանձնյակի խաչաերման արդյունքում, զույգ ալելներից մեկի ոչ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում ստացվում են չորս գենոտիպային և ֆենոտիպային խմբեր
7. գեների անկախ բաշխումը տեղի է ունենում այն դեպքում, եթե գեները հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում են

57

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. Ախտրիփիկացնող բակտերիաներն ամոնիակը վերածում են ազոտական և ազոտային թթվի աղերի
2. Միմիկրիա է կոչվում հարմարվածության այն տեսակը, երբ կենդանու մարմնի գունավորումը նման է շրջապատի գույներին
3. միկրոէկոլոյուցիայի արդյունքում առաջանում են նոր տեսակներ, ցեղեր,
ընտանիքներ
4. տարածվածության նեղ արեալ ունեցող տեսակները կոչվում են կոսմոպոլիտ
տեսակներ
5. օվկիանոսի ջրերը, նավեր և հողը դասվում են հանքային նյութերի շարքին
6. ձկների և խեցգետինների խոհկներն անալոգ օրգաններ չեն

58

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. պոպուլյացիայի խտությունը տվյալ տարածքային կամ ծավալային միավորում
եղած առանձնյակների թիվը կամ կենսազանգվածն է
2. կենսաբանական արտադրանքը կենսազանգվածի առաջացման արագությունն է
3. ներտեսակային գոյության կովի օրինակ է ասկարիդի մակարուծումը մարդու
օրգանիզմում
4. ատավիզմները դրսնորվում են տեսակի բոլոր առանձնյակների մոտ
5. նույն տեսակին պատկանող, սակայն որոշ ձևաբանական տարրերություններ
ունեցող առանձնյակները միավորվում են «կրկնորդ տեսակների» խմբում
6. սիմպատրիկ տեսակառաջացումը նոր տեսակի ծագումն է նախկին արեալի
ներսում
7. բնական ընտրությունն ուղղորդում է էվոլյուցիային

(59-60) Ֆոտոսինթեզի այրոցեսում կլանվել է 110 կգ CO₂: 1 մոլ զազր զբաղեցնում է 22,4 լիտր
ծավալ:

59

Քանի՞ լիտր թթվածին է արտադրվել այդ ընթացքում:

60

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (կգ):

61

Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացավ 12 մոլ CO₂ և 108 մոլ H₂O: 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաթթու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա: Քանի՞ կՋոուլ է կազմում ընդհանուր էներգիան այդ ընթացքում:

- (62-63) Խաչասերվել են AaBbCcDdEe և AABbCcDDEe գենոտիպով առանձնյակներ: Ալելային գեների առաջին 3 զույգում առկա է ոչ լրիվ դոմինանտուրյուն, իսկ վերջին երկուսում՝ լրիվ:

62

Քանի՞ գենոտիպ կստացվի նշված առանձնյակների սերնդում:

63

Քանի՞ տեսակի զամետներ կձևավորվեն AaBbCcDdEe գենոտիպ ունեցող առանձնյակի օրգանիզմում, եթե ալելային գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում:

Դեղնանիկների փոմփոլիկի առկայությունը դոմինանտում է փոմփոլիկի բացակայության նկատմամբ և հանդես է գալիս որպես դոմինանտ առաջարկումային հատկանիշ, իսկ փետուրների կանաչ գույնը դոմինանտում է շագանակագույնի նկատմամբ և ժառանգվում է որպես X քրոմոտոմին շղթայակցված հատկանիշ: Կանաչ փոմփոլիկավոր էզ և կանաչ անփոմփոլիկ արու դեղնանիկների խաչաերման արդյունքում ստացվեցին կանաչ փոմփոլիկավոր, կանաչ անփոմփոլիկ, շագանակագույն անփոմփոլիկ արու ճտերի զարգանալու հավանականությունը սերնդում՝ արտահայտված տոկոսներով:

- (65-66) Օրվա ընթացքում մաշկի մակերևույթից ջերմածառագայթման միջոցով հեռացել է 29400 կԶ էներգիա: Հայտնի է, որ մաշկի մակերևույթից ջերմածառագայթման միջոցով հեռացվում է ավելցուկային ջերմային էներգիայի 60%-ը, գոլորշիացման միջոցով՝ 20%-ը, ջերմահաղորդման միջոցով՝ 15%-ը, և 1 գ քրտինքի գոլորշիացման համար պահանջվում է 2,45 կԶ էներգիա: Ընդունել, որ մաշկի մակերեսը $1,5 \text{ մ}^2$ է:

65

Որոշել այդ ընթացքում մաշկի 1 սմ^2 մակերեսից քանի՞ Ջոուլ ջերմային էներգիա է հեռացվել ջերմահաղորդման միջոցով:

66

Քանի՞ գրամ քրտինք է գոլորշիացել այդ ընթացքում:

- (67-68) 6 ժամ ծանր ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագացել են 1,5 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,8 անգամ, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ կծկման ժամանակ փորոքից արտանդվող արյան ծավալը՝ 1,2 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում, սրտի բռնորաշրջանը տևում է 0,8 վրկ, և յուրաքանչյուր կծկման ժամանակ փորոքից արտանդվում է 70 մլ արյուն:

67

6 ժամ տևողությամբ աշխատանքի ընթացքում արյան մեջ քանի^o լիտր քրվածին է յուրացվել օրգանիզմի կողմից, եթե աշխատանքի ընթացքում օրգանիզմում յուրացվող քրվածնի ծավալն աճում է 25%-ով:

68

Քանի^o լիտր արյուն է արտանդել սիրտը մեկ օրվա ընթացքում:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. մեզի վերջնական ձևավորումը տեղի է ունենում երիկամային ավագանում
2. միզարձակման հումորալ կարգավորումն իրականացնում են վահանաձև գեղձը և մակերիկամների միջուկային շերտը
3. պատիճից սկիզբ է առնում ծնկաձև խողովակը, որն իջնում է միջուկային շերտ, ապա վերադառնում կեղևային շերտ և վերածվում է ոլորուն (գալարուն) խողովակի
4. արտատար զարկերակը ճյուղավորվում է մազանոթների, որոնցով հոսող առյան մեջ նեֆրոնի խողովակներով հոսող առաջնային մեզից կլանվում են օրգանիզմին անհրաժեշտ նյութերը
5. առաջնային մեզը ձևավորվում է նեֆրոնի պատիճում և ոլորուն (գալարուն) խողովակներում
6. պարասիմպաթիկ նյարդային համակարգի ազդեցությամբ ուժեղանում է ջրի հետադարձ ներծծումը

70

Օրգանիզմների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների ձևերի վերաբերյալ ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Միջերկրական ծովում բնակվող կարապուսի և հոլոսուրիայի փոխհարաբերությունները կոռպերացիայի օրինակ են
2. մուտուալիզմ են այն փոխշահավետ հարաբերությունները, որոնց դեպքում փոխազդող տեսակների համատեղ կյանքն անհրաժեշտ պայման է յուրաքանչյուրի գոյատևման համար
3. կոմենսալիզմը միջտեսակային փոխհարաբերությունների ձև է, որի դեպքում փոխազդող տեսակներից մեկի համար այն շահավետ է, մյուսի համար՝ անտարբեր
4. ամենսալիզմը միջտեսակային փոխհարաբերությունների ձև է, որի դեպքում մի տեսակն օգտագործում է մյուսի ներկայացուցիչներին որպես սննդի աղբյուր և հաճախ նաև որպես բնակության միջավայր
5. մուտուալիզմի օրինակ է, եթե էպիֆիտ բույսերն օգտագործում են ծառաբույսերը որպես հենարան
6. կոռպերացիայի դեպքում երկու տեսակներն ել օգուտ են ստանում, սակայն դրանց համատեղ գոյությունը պարտադիր չէ